Արձանագրություն N 3
Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի թեք տանիքների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԲՄԾՁԲ-20/48 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 13.05.2020թ.
ժամը՝ 11:10

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Աբրահամյան/գնահատող/, Ա. Սարգսյան / գնահատող /, Կ. Հարությունյան /բացող/, Ռ. Գրիգորյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/48» ծածկագրով գնման ընթացակարգի ամփոփման մասին

(Ա. Կիրակոսյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ 27.04.2020 թվականին «ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-ին ներկայացվել էր ԵՔ-ԲՄԾՁԲ-20/48 ծածկագրով ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու առաջարկ: Ընկերությունը պարտավոր էր պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում /մինչև 12.05.2020 թվականը/ պատվիրատուին ներկայացնել հաստատված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները, որը Ընկերության կողմից չի տրամադրվել:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ Ընկերությունը համաձայն «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

-ընթացակարգի 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ ԷԼ-ՍԹՐՈՅ ՍՊԸ-ին, իսկ 2-րդ չափաբաժնի մասով, հաշվի առնելով, որ մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում են նախատեսված ֆինանսական միջոցները, անցկացնել գների նվազեցման միաժամանակյա բանակցություններ՝ համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի:

1.2 Ելնելով երկրում առկա արտակարգ դրության պայմաններից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց բանակցությունները անցկացնել հեռահար կապի միջոցներով, միաժամանակ: Բանակցությունների հեռահար անցկացման ձևը նախօրոք կհամաձայնեցվի մասնակիցների հետ:

1.3 Գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների կիրականացվեն 19.05.2020թ. ժամը 15:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/48» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում պայմանագրի կնքման գործընթացը ժամանակավոր դադարեցնելու մասին

(Ա. Կիրակոսյան)

2.1 Ընդունել ի գիտություն, որ 27.04.2020 թվականին «ԷԼ-ՍԹՐՈՅ» ՍՊԸ-ին ներկայացվել էր ԵՔ-ԲՄԾՁԲ-20/48 ծածկագրով ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու առաջարկ:

Սահմանված ժամկետում մասնակցի կողմից ներկայացվել է իր կողմից հաստատված պայմանագրերի օրինակները և համապատասխան ապահովումները:

2.2 Հաշվի առնելով, այլ գնման ընթացակարգերի շրջանակներում մասնակիցների կողմից ներկայացված բանկային երաշխիքներում առկա անհամապատասխանությունները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց սույն ընթացակարգի շրջանակներում պայմանագրի կնքման գործընթացը կասեցնել և հարցում ներկայացնել համապատասխան բանկ՝ «ԷԼ-ՍԹՐՈՅ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման ապահովման բանկային երաշխիքի իսկության ճշտման նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Կիրակոսյան

Անդամներ՝ ---------- Ռ. Գրիգորյան

---------- Ա. Սարգսյան

---------- Կ. Հարությունյան

---------- Ռ. Աբրահամյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան